



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14451 գործարքներ, որոնց քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 10.1%-ով, իսկ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 14.9%-ով:

2008թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4463 օտարման գործարքների 78.3%-ը կազմել են առուվաճառքները, 19.9%-ը՝ նվիրատվությունները և 1.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. դեկտեմբերին, 2008թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.7%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 25.1%-ով:

2008թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2008թ. դեկտեմբերին, 2008թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 16.1%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 40.7%-ով:

2008թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2007թ.	դեկտեմբեր 2008թ.	նոյեմբեր 2008թ.
Կենտրոն	474100	496300	495400
Արաբկիր	378400	392800	400400
Քանաքեռ-Զեյթուն	297800	296500	310000
Նոր-Նորք	253900	265700	269100
Ավան	255700	264600	276900
Էրեբունի	254800	267200	271600
Շենգավիթ	264000	270300	278300
Դավթաշեն	276900	297200	299300
Աջափնյակ	260100	255000	265500
Մալաթիա-Սեբաստիա	254700	253600	259000
Նուբարաշեն	138400	152600	167900
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>282600</b>	<b>292000</b>	<b>299400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նոյեմբերի համեմատ նվազել են 2.5%-ով:

2008թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 397 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ աճել է 3.4%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 28.1%-ով:

2008թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2007թ.	դեկտեմբեր 2008թ.	նոյեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	112300	145100	140400
	Ապարան	30900	37000	37000

	Թային	40400	48200	48200
Արարատ	Արտաշատ	90300	105700	107900
	Մասիս	116300	146600	140400
	Վեդի	74200	84800	84800
	Արարատ	58200	75500	72300
Արմավիր	Վաղարշապատ	149500	175600	178700
	Արմավիր	109200	126500	129000
	Մեծամոր	69300	93000	91600
Գեղարքունիք	Սևան	76600	104500	106100
	Գավառ	41000	51100	51800
	Մարտունի	61300	73300	73300
	Վարդենիս	29200	33500	33400
	Ճամբարակ	15600	17300	16700
Լոռի	Վանաձոր	81400	105400	102900
	Ստեփանավան	43400	50200	49400
	Մայիսակ	57200	65400	62800
	Ալավերդի	27800	33200	32700
	Տաշիր	29000	33500	33500
	Թումանյան	5500	5600	5600
	Շամլուղ	3200	3200	3200
	Ախթալա	12700	13000	13000
Կոտայք	Աբովյան	156400	174000	177500
	Նոր Հաճն	113700	145100	142100
	Բյուրեղավան	84900	121600	121600
	Եղվարդ	106000	127600	127600
	Հրազդան	59600	75400	76900
	Ծաղկաձոր	114000	172500	172500
	Չարենցավան	74500	103000	98500
Շիրակ	Գյումրի	84300	122500	122500
	Արթիկ	48900	62500	61100
	Մարալիկ	25900	29800	29400
Սյունիք	Գորիս	85500	114600	114600
	Կապան	75500	110400	108200
	Սիսիան	60300	88500	87400
	Մեղրի	44000	50500	49200
	Ագարակ	27600	30300	30300
	Քաջարան	40600	53600	53600
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	69300	83800	83800
	Եղեգնաձոր	88800	106400	106400
	Զերմուկ	115000	145300	145300
Տավուշ	Դիլիջան	79000	106000	106000
	Իջևան	105800	152100	146700
	Բերդ	37300	40600	40600
	Նոյեմբերյան	29100	31200	31200
	Այրում	21000	21100	21100

2008թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. նոյեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 467 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 105,

մյուս մարզերում միասին վերցրած՝ 362: 2008թ. դեկտեմբերին, 2008թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 19.4%-ով, ընդ որում Երևանում՝ 34.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 15.7%-ով: 2007թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.3%-ով, ընդ որում Երևանում՝ 47.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 24.6%-ով:

2008թ. դեկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2007թ.	դեկտեմբեր 2008թ.	նոյեմբեր 2008թ.
Կենտրոն	480100	510000	510000
Արաբկիր	391100	438700	438400
Քանաքեռ Զեյթուն	302800	325900	325700
Նորք Մարաշ	251800	314100	313700
Ավան	262000	291200	291000
Էրեբունի	258200	291400	291000
Շենգավիթ	267200	293900	293800
Դավթաշեն	282600	324500	324500
Աջափնյակ	264700	302400	302200
Մալաթիա-Մեքաստիա	259600	295700	295300
Նուբարաշեն	141700	172300	172300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>287400</b>	<b>323600</b>	<b>323400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նոյեմբերի համեմատ մնացել են հիմնականում անփոփոխ:

2008թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2007թ.	դեկտեմբեր 2008թ.	նոյեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	116600	145400	144800
	Ապարան	34000	38900	38900
	Թալին	43200	48900	48800
Արարատ	Արտաշատ	96400	112300	112300
	Մասիս	119400	146800	141500
	Վեդի	76300	91900	91600

	Արարատ	63400	75700	73000
Արմավիր	Վաղարշապատ	151800	180800	180500
	Արմավիր	112800	132500	132500
Գեղարքունիք	Սևան	78400	107500	107300
	Գավառ	42800	55800	55400
	Մարտունի	63400	78000	77600
	Վարդենիս	31200	37400	37100
	Ճամբարակ	19000	21500	21200
Լոռի	Վանաձոր	85500	110200	110000
	Ստեփանավան	46900	54000	53800
	Սպիտակ	59200	67800	67600
	Ալավերդի	30200	37300	37300
	Տաշիր	31100	38100	37900
	Թումանյան	8900	10400	10400
	Շամլուղ	6000	7400	7400
	Ախթալա	15100	16200	16200
Կոտայք	Արովյան	160900	192300	192100
	Նոր Հաճն	118200	147300	143800
	Բյուրեղավան	86900	123400	122700
	Եղվարդ	110900	133700	133500
	Հրազդան	63100	81400	81000
	Ծաղկաձոր	181400	274600	271300
	Չարենցավան	76500	103800	100500
Շիրակ	Գյումրի	89800	125500	124300
	Արթիկ	51400	64000	63700
	Մարալիկ	29200	32700	32700
Սյունիք	Գորիս	87800	126800	126600
	Կապան	78600	112400	109400
	Սիսիան	62700	90800	88600
	Մեղրի	46700	52000	51700
	Ագարակ	29500	33300	33300
	Դաստակերտ	9900	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	72000	87500	87300
	Եղեգնաձոր	92800	111300	111100
	Ջերմուկ	66000	101700	100200
Տավուշ	Դիլիջան	83400	119400	119200
	Իջևան	107700	153200	147700
	Բերդ	39200	42600	42500
	Նոյեմբերյան	34600	36700	36600
	Այրում	22800	23000	23000

2008թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. նոյեմբերի համեմատ աճել են 1.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1728 միավոր /1027.09 հա/ հողեր, որից Երևանում` 98 միավոր /17.78 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 53 միավոր /37.76 հա/ հողեր, որից Երևանում` 23 միավոր /1.84 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 753 միավոր /911.90 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.56 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 655 միավոր /63.18 հա/, որից Երևանում` 70 միավոր /10.76 հա/,

- հասարակական կառուցապատման հողեր՝ 279 միավոր /15.90 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /6.21 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 23 միավոր /9.30 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.26 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 9 միավոր /2.76 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /24.06 հա/

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1583 միավորի /892.35 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 84 միավոր /13.77 հա/, նվիրատվության գործարքներ՝ 134 միավորի /133.08 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /3.69 հա/ և փոխանակության գործարքներ՝ 11 միավորի /1.66 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.32 հա/:

Հանրապետությունում 2008թ. դեկտեմբերին, 2007թ. դեկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 29.4%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 35.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 22.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 34.3%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 283.67 հա, որից 272.30 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.9%-ը կամ 394 գործարքներ /160.49 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 21 գործարքներ /1.30 հա/, իսկ 74.7%-ը կամ 1183 միավորը /731.85 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 63 միավոր /12.47 հա/:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /0.01 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	13	0.71	8	0.58	2	0.56	2	0.26	45	6.93	14	4.72
Արագածոտն	14	26.84	0	0.00	2	0.26	9	0.78	97	211.99	2	1.21	63	7.49	2	0.07
Արարատ	7	6.02	0	0.00	10	1.05	11	0.44	105	37.29	3	0.47	74	6.31	17	0.22
Արմավիր	20	62.02	1	0.10	0	0.00	13	0.72	106	210.28	0	0.00	101	10.21	6	0.35
Գեղարքունիք	1	0.56	0	0.00	25	1.08	0	0.00	37	26.32	1	0.01	28	3.76	1	0.14
Լոռի	2	0.30	0	0.00	12	0.40	37	0.52	48	35.73	2	3.34	21	2.11	10	0.20
Կոտայք	42	44.64	4	0.67	5	0.25	15	0.39	135	61.53	1	0.17	101	8.79	41	3.44
Շիրակ	2	2.40	4	2.16	36	1.36	29	0.53	18	21.45	0	0.00	13	1.26	2	0.15

Մյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.26	9	6.78	1	0.85	5	0.47	0	0.00
Վայոց Ձոր	5	3.19	0	0.00	5	0.31	29	0.23	10	16.31	0	0.00	7	0.75	1	0.01
Տավուշ	0	0.00	2	0.06	10	0.54	7	0.63	28	13.39	0	0.00	9	0.71	2	0.01
Ընդամենը	93	145.97	11	2.99	118	5.96	169	5.08	595	641.63	12	6.31	467	48.79	96	9.31

Ստորև ներկայացվում է 2008թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	14	0.47	0	0.00	8	0.15	6	0.32	7	0.83	0	0.00	0	0.00	5	0.57	2	0.26
Արագածոտն	5	0.04	0	0.00	0	0.00	5	0.04	20	27.84	14	26.84	0	0.00	2	0.26	4	0.74
Արարատ	3	0.11	0	0.00	1	0.02	2	0.09	25	7.40	7	6.02	0	0.00	9	1.03	9	0.35
Արմավիր	4	0.11	1	0.10	0	0.00	3	0.01	30	62.73	20	62.02	0	0.00	0	0.00	10	0.71
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	26	1.64	1	0.56	0	0.00	25	1.08	0	0.00
Լոռի	5	0.10	0	0.00	1	0.01	4	0.09	46	1.12	2	0.30	0	0.00	11	0.39	33	0.43
Կոտայք	4	0.14	0	0.00	2	0.08	2	0.06	58	44.87	38	43.70	4	0.67	3	0.17	13	0.33
Շիրակ	14	0.49	0	0.00	5	0.23	9	0.26	57	5.96	2	2.40	4	2.15	31	1.13	20	0.28
Մյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.26	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.26
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	39	3.73	5	3.19	0	0.00	5	0.31	29	0.23
Տավուշ	10	0.73	1	0.04	4	0.09	5	0.60	9	0.51	0	0.00	1	0.02	6	0.46	2	0.03
Ընդամենը	59	2.19	2	0.14	21	0.58	36	1.47	328	156.89	89	145.03	9	2.84	97	5.40	133	3.62

Հանրապետությունում 2008թ. դեկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /0.94 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. դեկտեմբերին, 2007թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 58.7%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 58.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 58.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 76.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 12.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 51.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 59.1%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	14	26.84	34.6	766.7	266.8	57	40.84	365.0	12000.0	3910.0
Ապարան						3	1.72	86.5	2727.3	490.2
Թային						27	164.12	93.6	5494.5	496.8
Ծաղկահովիտ								79.5	1000.0	211.7
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	3.42	672.5	675.4	674.0	51	13.78	335.1	10833.3	1968.8
Մասիս						16	4.75	200.0	11904.8	2640.5
Վեդի	5	2.60	180.0	3050.0	859.1	38	18.76	207.0	10795.1	1772.1
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	5.56	30.1	31.5	31.0	43	37.87	294.3	9090.0	1138.0
Բաղրամյան	9	46.56	33.8	35.4	33.9	11	145.78	90.6	2561.1	660.9
Վաղարշապատ	8	9.90	52.5	622.1	276.2	51	25.45	444.4	11764.7	2325.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						24	9.35	199.8	1875.0	445.0
Ճամբարակ								60.5	953.3	201.5
Մարտունի						2	0.25	51.1	2850.0	528.8
Սևան								52.2	2134.8	212.5
Վարդենիս	1	0.56	143.0	143.0	143.0	11	16.72	41.2	2575.1	340.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						11	4.21	170.4	6424.2	1106.5
Գուգարք						4	2.93	234.6	6065.9	1041.2
Սյիտակ						4	1.98	250.0	5555.5	572.0
Ստեփանավան	2	0.30	573.0	573.5	573.3	11	6.59	90.6	1686.6	415.8
Տաշիր						18	20.03	45.3	1384.4	218.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	20	25.76	43.0	1385.5	304.5	53	19.04	279.3	11942.7	4640.5
Եղվարդ	6	8.16	73.2	1623.3	699.5	66	30.51	174.4	11971.8	3255.2
Հրազդան	12	9.78	124.8	1595.0	328.8	16	11.98	130.5	10256.4	1335.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	2	2.40	145.0	280.9	213.0	10	13.75	252.0	1693.1	485.5
Ամասիա								40.9	261.0	127.8
Անի						5	6.54	110.6	546.9	287.8
Աշոցք						3	1.16	58.5	215.8	122.5
Արթիկ								79.4	1428.6	195.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								92.6	1023.2	414.5
Կապան								120.0	841.6	258.8
Մեղրի						1	0.01	193.0	3000.0	554.8
Սիսիան						8	6.77	46.3	1977.4	287.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	4	1.69	175.0	240.0	206.5	6	12.73	125.0	10000.0	1415.5
Վայք	1	1.50	42.7	42.7	42.7	4	3.58	58.8	1430.7	526.2
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						10	3.58	213.3	3783.8	432.5
Իջևան								267.5	9454.5	928.5
Նոյեմբերյան						18	9.82	46.7	7368.4	678.6



Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. դեկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	2600.0	174.1	175.2	174.7	54	53716.0	130.7	22200.0	2574.0
Ապարան						1	1170.0	124.1	609.6	230.0
Թալին						6	17490.0	63.2	1454.8	120.5
Ծաղկահովիտ						1	1000.0	60.0	214.3	75.1
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	7	8548.0	534.7	537.6	536.3	17	14515.0	173.9	7140.3	927.0
Մապիս	2	1790.0	376.7	1980.2	1178.5	36	27130.0	187.5	25000.0	1220.0
Վեդի						21	21455.0	126.1	5000.0	680.4
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						42	40326.0	131.6	9090.9	1220.0
Բարրամյան						2	3200.0	100.0	833.3	161.1
Վաղարշապատ						57	58536.0	197.4	26528.4	1558.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						3	4130.0	186.6	1084.3	409.8
Ճամբարակ						7	9098.0	71.3	2286.2	115.0
Մարտունի	24	10237.0	113.1	118.8	115.0	12	17419.0	119.3	5000.0	272.6
Սևան	1	608.0	503.3	503.3	503.3	5	5117.0	240.0	3110.4	188.5
Վարդենիս						1	1880.0	72.5	987.2	140.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						3	2240.0	114.3	1388.9	159.2
Գուգարք	10	3595.0	2009.7	3087.0	2168.9	12	10246.0	77.9	14083.3	642.0
Սպիտակ						3	5150.0	104.9	1348.3	157.3
Ստեփանավան	1	300.0	161.0	161.0	161.0	3	3460.0	88.2	1666.7	125.5
Տաշիր								45.3	400.0	74.3
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	3	1678.0	416.7	2325.0	1430.3	33	31759.0	264.5	35353.5	2089.6
Եղվարդ						62	50807.0	173.6	27000.0	2425.5
Հրազդան						6	5344.0	117.7	34848.5	1354.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	9	1984.0	1500.0	5714.3	2815.0	4	4862.0	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	4	1570.5	465.1	525.0	487.5	3	4100.0	67.9	180.6	104.2
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	18	7745.0	29.7	850.5	304.0	6	3648.0	111.8	5000.0	208.7
<b>Սյունիքի մարզ</b>										

Գործիս						3	2785.0	112.2	1700.0	268.8
Կապան								67.9	2638.9	218.8
Մեղրի						1	500.0	68.5	632.9	134.1
Սիսիան						1	1420.0	123.5	875.0	154.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	800.0	757.5	760.0	758.8	6	4725.0	96.7	7659.6	346.5
Վայք	3	2250.0	854.0	854.0	854.0	1	2820.0	120.7	1448.3	132.1
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	5	3751.0	1495.0	2300.0	1808.0	7	4405.0	74.1	14423.1	478.2
Նոյեմբերյան	1	840.0	377.1	377.1	377.1	2	2690.0	125.0	1948.1	155.8

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 22 գործարքներ 2.07 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ /0.76 հա/ Արարատի և 16-ը՝ /1.31 հա/ Լոռու մարզերում:

2008թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1060 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 77.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. դեկտեմբերին 2008թ. նոյեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 10.4%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 15.0%-ով:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 65 բնակարանների, 60 անհատական բնակելի տների, 463 հասարակական, 59 արտադրական նշանակության օբյեկտների, 395 միավոր /1968.75 հա/ հողերի և 18 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր /0.003 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ նվազել է 60.9%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ՝ 80.9%-ով: 2008թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 1968.75 հա հողերից 1.51 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1967.24 հա հողերի 261.87 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 1254.51 հա, որից 1248.53 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1317.68 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	24	25.30

Արարատ	0	0.00	8	24.35
Արմավիր	0	0.00	17	14.33
Գեղարքունիք	2	16.68	10	109.60
Լոռի	1	100.00	8	5.11
Կոտայք	5	1201.00	23	47.53
Շիրակ	0	0.00	23	40.65
Սյունիք	0	0.00	20	59.80
Վայոց Ձոր	0	0.00	3	1.29
Տավուշ	0	0.00	11	12.52
<b>Ընդամենը</b>	<b>8</b>	<b>1317.68</b>	<b>147</b>	<b>340.48</b>

2008թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1772 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.3%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ աճել է 12.8%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 37.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.5%/, առանձնատների /25.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.5%/ և հողերի /17.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 749 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ աճել է 27.8%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 27.4%-ով: 2008թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 346.33 հա հողեր, որից 2.46 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 69.9%-ը կամ 242.17 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 128.77 հա, որից 31.98 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 78 գործարքներ, որից 61-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 65.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 20.5%-ն՝ անհատական բնակելի տների, 10.3%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և 3.8%-ն հողերի նկատմամբ: 2008թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 4.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 1.6%-ով, իսկ մարզերում՝ 15.0%-ով:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 3-ական գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.04%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 72.7%-ով: 2008թ. դեկտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 3-ը՝ Արարատի, 2-ը՝ Գեղարքունիքի և 1-ը՝ Շիրակի մարզերում:

2008թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2448 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. նոյեմբերի համեմատ աճել է 16.3%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 3.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.7%/:

#### **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**